

ԲԱԺԱՆՈՂՑԱԳՐՈՒԹԻՒՆ


Պոլսահայ համար  
 Տարեկան 12 Տր.  
 Վեցամսեայ 6 "

Արևասահմանի համար  
 Տարեկան 15 "  
 Վեցամսեայ 8 "

Անկախ համար  
 Տարեկան 3 Տր.  
 Վեցամսեայ 1.50 "

ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 Մանուկան սոցիալական հոգսի համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին առջի անգամներու համար 20 ՍԿ զեղ կըլայ :

Վառանջի համար ձեռք 10 սանթիմ



Վանակ  
 W. 4  
 Vienna  
 Mechtthausgasse

«Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

Գրքարանի և յն սրահ

Արևասահմանի ձեռք (20 ՍԱՆԹԻՄ)

Պոլսահայ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ՉՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ՇԱՅԱԹ ՕՐԵՐԸ

ԱԶԳ

Մեր չի վճարող բաժանորդներէն կը խնդրենք շտապեն բաժանորդները զրկել, որպէս զի մենք ստիպուած չըլլանք ամէնքըն ալ մէկիկ մէկիկ խոյտառակել հրապարակաւ :

ԴԵՒԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Պոլսահայ համար ձեռք 10 սանթիմ  
 Վառանջի համար ձեռք 10 սանթիմ

Քի միջոց. գուցէ և ամբողջ կազմակերպութեան :  
 Անշուշտ վերակազմալ Հնչակեանները յեղափոխական տարրը կազմակերպութիւնը ազատելով Արփիարի ապականող ներկայութիւնէն, չի մոռացել չէզոքացնել և նրանց, որոնք այսքան ժամանակվայ եղբայրացու կը ռուհներ մէջ Արփիարի ալ եւ ձախ թեւերն էին կազմում և Արփիարի վերջին հինգ տարվան ազգակործան գործունէութեան զօրավիգներն էին :

Նորհասարակութեան վերակազմալ Հնչակեաններին, որոնք կարողութիւնը և անկեղծութիւնը ունեցան այդ արարածին իրենց կարևոր մարմնի միջոց գուրս քշելու և ամենայն անկեղծութեամբ ցանկանում ենք որ նրանց հրաւերը և կոչը արձագանք գտնի ուր որ պէտք է և վերջ գրվի այն դիւական պարին որով հայ ազգի ծոցից վիժած ամենաստոր տարրը շրջապատել էր հայ յեղափոխութիւնը :

ՎԱՐԴՈ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ ԶԷ

Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ կը թուրքներն ստացող երիտասարդներուն մէջ խումբ մը կայ, որ արտակարգ լրջութեան մը հովերը առած՝ կը խրատէ յեղափոխականները ետ կենալ իրենց բռնած սխալ և կորստաբեր ընթացքէն, ու ժողովուրդին կը քարոզէ հաշտուիլ թուրք կառավարութեան հետ, որովհետեւ ինք շատ թոյլ է, աշխատիլ զարգանալ, բազմանալ, զօրանալ և ապա մտածել ինքնուրոյն քաղաքական կեանք մը ձեռք բերելու համար :

Այդ խմբակին օրգանը դարձած է «Ժողովուրդին համար» թերթը :

Հակառակ կարծիքի տէր և անկեղծ մարդիկը յարգողներ ենք մենք. սակայն երբ այդ հակառակ կարծիքները խաղաղ հիմնու վրայ գրուած են, այն

ժամանակ մեր մտքէն հետեւեալ կասկածները կանցնին. այն որ կամ այդ ժամանակէն կանուխ լրջացած մարդիկ բոլորովին լրջութենէ զուրկ են ու չեն հասկնար թէ թուրքոյ հայերուս կեանքի պայմանները այնքան դժնդակ և այնքան մեռցնող են որ կամացուկ կերպով անկարելի է զարգանալ և զօրեղանալ. և կամ թէ նոր դիմակով շարլատաններ են, կը թուրք կոտորածներ կրկին վերագտնուելու հայ և թուրք ժողովուրդը միասին հարստահարելու համար և այդ պատճառով ալ իրենց զուռնան այդ եղանակով կը փչեն :

Մեր այդ ողորմելիները, զեռերիտասարդ չեղած ծերացածները, այնքան տղայամիտ են որ կը կարծեն թէ թուրքի իրենց չափ չի հասկնար որ հայերը եւ թէ կարծեն ազատաբար կը թուրք, հարստանալ, նոյնքան վճարանքաւոր պիտի դառնան իրեն համար, որչափ այսօր վտանգաւոր են : Ձեռ ըմբռնել թէ թուրքի այսօր զէնքով գործողները կը կոտորէ և կը հալածէ, որովհետեւ իր բռնութեան գէմ զէնքով կը կուտին. իսկ վաղը աւելի խիստ կերպով պիտի ոչնչացնէ զպրոցները և այն հայերը, որոնք գրքով եւ գրիչով պիտի հայր թուրքի գէմ մաքառելու պատրաստեն :

Ձէ, «Ժողովուրդին համար»-ին մէջ գրածները ժողովուրդին համար չեն գրուիլ, սինոք Արփիարները, Պիւլպիւլեանները յարգող մեզի և անձնատէր սերունդին համար զը գրուին : Պոլսոյ մէջ սնուած, ժողովուրդին հետ ոչ մէկ կապ ունեցող, ժողովուրդին ամենատաղնապալի վայրկեաններուն անորմէ հեռու, Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ սլքտացող քարիէրիսթները չեն կրնար ժողովուրդի ցաւերուն զուակից ըլլալ, չեն կրնար ժողովուրդին շահերուն համար մտածել :

ԿԷՏ

ՀՅՅԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Բացարձակապէս կը հերքուի այն լուրը թէ Ռուսիոյ դեսպանը զրաւոր յիշատակագիր մը յանձնած էր Բ. Դրան Հայաստանի մասին. Ռուս դեսպանը միայն բերանացի թուրք արտաքին գործոց նախարարին ու շաքրութիւնը հրաւիրել է քիւրտերուն ըրած խառնակութիւններուն վրայ. իսկ Բ. Դրան ալ յայտարարած է որ զօրքեր զրկուած են քրտերը զսպելու համար :

Ուրեմն Ռուսիոյ եւ Ֆրանսայի հայկական տաղնապետները հետաքրքրուելուն չափը այդ աստիճանի միայն, ինչպէս եւ հաւանական էր :

Հայկական ներքին խնդիրներէն ամենակարեւորը հիմա միութեան խնդիրն է եւ այն ճիղերը որոնք իրենց յեղափոխականներուն միջև կը թափուին մերձեցում մը, հապա միացում մը առաջ բերելու մեր յեղափոխական կուսակցութիւններուն եւ իմրակներուն մէջ : Ձէզքները, միութեան ճիւղերը որ մինչեւ հիմա բերան ու կողորդ կը պատուէին առ այժմ լուծ են. անշուշտ եւ վերաբուրած որ վերակազմալները փոխանակ իրենցմէ միջնորդ մը ընտրելու, ուղղակի հրապարակային դիմումով զիմեցին միւս կուսակցութիւններուն :

Մեր ազգային անգործ միջնորդներուն գործն ալ լինանալու վրայ կերելի :

Գեղեցիկ օր մը կարելի է որ մեր յեղափոխական զանազան կոչում կըրող տարրերը ի մի ձուլուին յեղափոխական գրոջակը խրախտաբար ծածանելու համար ու մեր զէնքիկ չէզոքները եւ միութեան անուշով որոտացողները նոր գոր գործ մը պիտի գտնան :

Ձուլումը աղէկ չեղաւ. նորէն ազգին հարուստները, փաշաները, էֆէնտիները, երգուեսլ պատուելիները բացը մնացին. յեղափոխական միաձուլ կազմակերպութեան մէջ ոչ մէկ վստահելի անձ կայ, որ ազգին ունեւոր մասը հաւատայ եւ իր զըրամները յանձն է :

Ու նորէն իրարանցումը պիտի իյնայ արտասահմանեան հայութեան մէջ. նորէն զժողովուրդիներ, նորէն աղմուկներ, Սակայն ինչ փոյթ, թող հայ զուտ յեղափոխական տարրը ի մի ձուլուի. մնացածներուն գործը կարգադրելը զերբին է :

Իբր վերջին լուր կիմանանք թէ Սեւ ծովի ափերը գտնուած հայաբնակ քաղաքներու ճրագիտութիւն, Սամսոնի և Կեբասունի մէջ թուրք հոգեւորական

նույն թիւը սկսեցի և մասնական ամբարձր գրգռել քրիստոնեաներուն աշխիւքն հայերուն դէմ :

Սուլթանն Համիտ մէկ կողմէն գոմիսիւններ կը հիմնէ Մուշի անցքերը քննելու, զօրք կը զրկէ քուրսերը զսպելու, հրամաններ կարձակէ իր իր պաշտօնեայիններուն հարածի միայն ըմբոստ հայերը, իսկ իրազօղ ժողովուրդին չը դպչի : Միւս կողմէն ալ սօֆիականները կը զրգռէ հայերը ջարդելու :

Սուլթանին հին սխառնի տա է : Սակայն Սուլթանի սխառնը ջարդելն է : մենք ե՞րբ պիտի հասկնանք թէ հայերու սխառնին ալ պիտի ըլլայ զէնքով, քարով, կացինով եւ գանակով պաշտպանուիլը եւ փոխադարձաբար ջարդելը :

\*\*\*

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԿԱՍԻՅ

VII

Անցեալ անգամ մենք ասացինք որ կովկասահայ հին տարալի լիբերալները ձուլվում են ժամանակակից բուրժուաների հետ : Յայտնի է որ բուրժուան պահպանողական է : նա երբէք տրամադիր չէ թոյլ տալու կամ քաջալերելու կեանքի մէջ երեւան եկած յառաջադիմական, տիրող կարգերը տակն ու վրա անող հասանքները, շատ անգամայդ տեսակ հոսանքները իր սաղմի մէջ խեղդելու համար նոյն իսկ կռիւ է մղում :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

VI

Ընթրիքը վերջացնելուց յետոյ մենք դուրս եկանք պարտիզից և ես վահէին մեր տունը տարայ : Սուս ու փուս ներս մտանք իմ սենեակը և վահէին խնդրեցի պատմել Սիրիբի մասին :

— Սիրիբի մասին ես ուզում տեղեկութիւն ստանալ : բայց ի՞նչ անեմ քեզ այդ հսկայ, այդ տարօրինակ կերպի մասին : ռուս հեղինակներէն շատերը այդ երկրի և քաղաքականների կեանքի մասին շատ բաներ են գրել : բայց այդ գրածքները չեն կարող ներկայացնել ամբողջապէս այն, ինչ որ կայ, կատարվում է այդ երկրի մէջ :

Երևակայիր մի ահագին, աներեւակայելի ահաղին տարածութիւն որի այս և այն անկիւնում, հարիւրաւոր մղոնների վրա տարածված են մեծ և փոքր բնակութիւններ, գիւղեր, քաղաքներ, աւաններ :

Այդ երկրում ջը ամսի չափ կեանքը մեռնում է : ձիւնը, փոթորիկը և կատաղի ցրտերը թագաւորում են այդ հանքերով լի հարս ստ երկրի մէջ : յարաբերութիւնները աշխարհի միւս մասերի, մայր հայրենիքի հետ բոլորովին զաղարում է : իսկ մնացած

Այսօր կովկասահայ բուրժուան կռիւ մղելու պէտքը չէ զգում, որովհետեւ իր դասակարգի, իր շահերի դէմ բացարձակ կերպով կռիւ մղողներ չըկան :

Վերցրէք մեր ազատամիտ կուսակցութիւն կոչված մամուլի ներկայացուցիչները՝ Մշակ, Մուրճ ևն : և կը տեսնէք որ այնտեղ տիրող ազատամտութիւնը շատ բորբոսնած, շատ հնացած է : նա այն է ինչ որ երեսուն տարի առաջ, միայն այն տարբերութեամբ որ հիմա նախկին թարմութիւնը և կտրուել չըկայ :

Երկրի քաղաքական պայմանները աջակցում են ներկայ դերութեան յարատեւելուն : Մամուլը ռուս կառավարութեան ճիւղաների տակ այնքան խեղդված է, որ ալ եւս աւելի ըմբոստ, աւելի արմատական, աւելի ազատամիտ տարրը անկարող է իւր օրգանը ունենալ, իւր մաքերը, գաղափարները քարոզել և կռիւ մղել այդ մեռնող միակերպութեան դէմ :

Կովկասահայ բուրժուան մի տեսակ «անցողական» փուլի մէջ : բայց այդ փուլը կարող է շատ եղիարատել իննել, անցողականի կերպարանքը կորցնել, իսկ յետոյ, փոխանակ առաջ անցնելու, կարող է աւելի ետագարձ քայլ առնել : Այդ բոլորը կախված է ռուս կառավարութեան տրամադրութիւններից : իսկ այդ տրամադրութիւնները դեռ երկար

երեք ամսան ամիսները կերպարանափոխում են այդ մեռած աշխարհը : հսկայական հարթութիւնները ծածկվում են սահման չունեցող արտերով լի թխարի անտառները զարգարվում են, խոշոր գետերը ազատվում են սառցային կապանքներից և Սիրիբիցին այդ երեք ամսվայ մէջ մի առանձին թափով սկսում է աշխատանքի, կարծես ինը ամսվայ քնանալու վրէժը լուծելու տենչով այրված :

Սիրիբի մէջ կեանքը շարունակ, ամառ ձմեռ ետեւէ միայն հանքերի մէջ : Այնտեղ ամառ ձմեռ աշխատում են արտադրականները գետնի սիրալ ճեղքելով ոսկի, արծաթ, պղինձ և ուրիշ հանքեր հանելով : Այդ հանքերի մէջ չը նայած կեանքի տնտեսութեան, մարդը միայն մի միջնորդութիւն ունի : դասակարգերի, գիւղի տարբերութիւնը չը կայ : հասարակ գիւղացու հետ միասին բաժնով ու բրիչով գետինը փորում է արիւն քրտինք թափելով և երկվայ դուռով ձրիակեր ազնւականը մարդկային կոտորակները մի պայտարարութեան են վերածված :

Սակայն ամառը սառնանկիր ուշխատուորին էլ մի առանձին կենդանութիւն է սաղխ : այդ ժամանակին յոյսերը նրա մէջ վերակենդանում են, այդ ժամանակ նրա մէջ գարնանում է ուզտութեան ծարաւը, ծովանման արտերի պղինքները հրապուրում են արտադրականի գրկվելու իրանց հետ, վիթխարի անտառները իրենց զով ծովաների մէջ են կանչում նրան և նա

ժամանակ վատ ուղղութիւն պէտք է ունենան դէպի հայ ժողովուրդը :

Նոյն պայմանների մէջ են և Լեհերը : սակայն դրանք արտասահմանում մեծաքանակ հրատարակութիւններ ունին, և ունենալը բաւական չէ, այլ և կարողանում են Ռուսաստանի մէջ տարածել :

Ռուսահայութիւնը այդ շնորհքը չունի : մենք էլ արտասահմանում հրատարակութիւններ ունինք, թէև աղքատ, բայց այդ հրատարակութիւնները տարին մի երկու անգամ հաղիւ են մըռնում կովկաս և շատ քիչ մարդ է արժանանում այդ հրատարակութիւնների երեսը տեսնելուն : Խօսքս ազատ հրատարակութիւնների մասին է ի հարկէ, ոչ թէ այն հրատարակութիւնների, որոնք այն ոգևով են կազմվում, որ ռուսական ցէնզորի թոյլտուութեամբ կարող են ազատ մուտք ունենալ Ռուսաստան :

\*\*\*

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Պրանսայի և Թուրքիոյ յարաբերութիւնները տակաւին լաջուած են : Լորանտոյի պահանջքի վերաբերմամբ Պրանսական կառավարութիւնը ոչ մի գիշումի տրա-

սրատարփ ամէն առաւոտ դուրս է գալիս իր բանտից՝ բարեւում ամրան արեւին և աւելի մեծ զփականակութեամբ գնում դէպի հանքը և իր ուղիւր յոգնեցնում փախուսող յաղողցիներ համար :

Շատ քիչ ինչ է յաջողվում փախել : ճիշդ է, բայց հետ հաշտվողների թիւը շատ քիչին է : ամէնքն էլ կուզէին ազատվել այդ սարսափիկ կեանքից, բայց փախուսող զրգորված է այնքան մեծ վտանգներով, որ շատ քիչն են կարողանում որոշել անձնատուր լինել այդ վտանգներին :

Ապրիլու ձգտումը մարդի մէջ շատ զարգացած է : և այդ ձգտումը, այդ տրամադրութիւնը աւելի որոշ կերպով կերեւում է սառնանկիր աշխատանքի դատապարտված մարդկանց մէջ : Երևակայեցէք որ դրանց մէջ անձնատու պաններ շատ քիչ են պատահում, չը նայած որ ամէն վայրկեան բոլորի շրթունքներն էլ արտասանում են «ախ Աստուած, ե՞րբ պէտք է հոգիս առնես և ինձ ազատես այս տանջանքներից» :

Միմիայն չնչեղու ապրիլու համար մարդը որչափ կարող է ստորանալ, որչափ ստրկանալ, միայն այդպիսի տեղերում կարելի է չքափելի կերպով տեսնել և զգալ :

Սյուր ինձ համար ամենեւին զարմանալի չէ որ հայ ժողովուրդը աւելի գերադասում է թուրքի պատճառած բոլոր տանջանքները կրել, քան թէ ապստամբել : Ապստամբութիւնից վախենում է, որովհետեւ համոզված է

մարդի է : Սուլթան Ռուսիոյ դեպքանին միջամտութիւնն ալ ինչորեց, սակայն Զինովիէֆ յայտարարած է թէ՛ աւելի լաւ կըլլայ Ֆրանսական կառավարութեան պահանջները կատարուին :

Սուլթանն Համիտ, ուղէ շուրջ 345000 գեղին սոկիները պիտի հանրէ : Ու այնուհետեւ թերեւս Պրանսայի և Թուրքիոյ յարաբերութիւնները վերակին, թէեւ շատ մը եւրոպական թերթեր հաղորդեցին թէ Պրանսա մտադիր է այս առիթէն օգտուիլ և մինչեւ օրս շատ մը առկախ մնացած խնդիրները կարգադրել :

Կրէտէն ալ Սուլթանի ձեռքէն բոլորովին ելլալու վրայ կը թուի : Սուլթանի անուանական գերիշխանութիւնն ալ բոլորովին պիտի ջնջուի այդ քաջ կղզեցիներուն վրայէն, որոնք տասնեակ տարիներով արիւն թափեցին, ջարդուեցան ու ջարդեցին, և վերջապէս իրենց նպատակին կիսով չափ հասան, ու այսօր ալ բոլորովին պիտի հասնին, եթէ կղզին իսկապէս մայր Յունաստանին միացուի, ինչպէս կը յայտարարեն շատ մը եւրոպական թերթեր :

Պուկարիա՝ Մակեդոնիոյ մէջ տիրող թրքական սարսափներուն պատճառով յուզումներ կը սատականան : Մակեդոնական Բ. Կոմի-

թէ կարող է շուտով վերջ ալել իր կեանքին : տանջանքներից չէ վախենում, որովհետեւ նրանք սովորութիւն են գարձել և նրանցից հետեւող վտանգը անմիջական չէ : ...

Սիրիբում միայն, ես սկսեցի որոշ կերպով մարդին ստիկ և սիրել :

Ես ստեցի այն բաղնիկները, որ անասունից աւելի ստորանում է միմիայն իր գոյութիւնը պահպանելու համար : Սերեցի այն սակաւաթիւ անհասներին, որոնք մի վայրկեան ազատ շունչ քաշելու համար, միամբողջ կեանքը զոհելու քաջութիւնը ունէին :

— Բայց մի՞թէ կարելի է մեղադրել նրան, ով թոյլ է :

— Ոչ, ես չեմ մեղադրում, այլ արհամարում եմ : Ինքս էլ մարդ լինելով իմ նմանի մէջ որը անասունի չափ ստորացել է, իմ անձամբութիւնը ցնթոտված, վիրաւորված եմ տեսնում : Ինչպէս բարոյական կինը իրեն վիրաւորված է զգում պառնիկ կնոջ ներկայութեանը, նոյնպէս եւ ազատասէր մարդը իրեն վիրաւորված է զգում ստրուկի կեանքը պահելու համար սողացողի ներկայութեանը : Եւ այսօր, երբ ես Հայաստան եմ ուզում գնալ, դրա միակ պատճառը այն է որ ես անձամբ ինձ շատ վատ եմ զգում երբ տեսնում եմ իմ ազգակիցը, ինձ նման մարդը անուանական դրութեան է հասել, անմիայն էր գոյութիւնը վտանգի չը ենթարկելու համար : Ես ուզում եմ ամպկցել այն դործին, որով կարելի պէտք է լինի վերջ տալ այդ անանական կեանքին :

(Շարունակելի)

Թէիւն հրաւերին հիման վրայ ա- մէն քաղաքներու մէջ միմիկ- ներ տեղի ունեցան, որոնց մի ջոցաւ պուլկար ժողովուրդը իր կառավարութեան կը խնդրէ ազու կերպով միջամտել ուր որ անկէ Մակեդոնիոյ վիճակը բարելաւելու համար, հակառակ պարագային նոյն իսկ ինքը պուլկար ժողովուրդը, այլևս համբերութեան գուրս ելած, պիտի աշխատի օգնութեան երթալ իր տանջուող եղբայրակիցներուն:

Չինաստան կամայ կամաց կը սկսի իր սովորական կերպարանքը ստանալ. ճիշդ է, թէև անզ տեղ Չին ժողովրդի կողմէն թշնամական ցոյցեր տեղի կունենան եւրոպացիներուն հանդէպ բայց այդ ցոյցարարները շուտով մը կը զլպուին Չին կառավարութեան ձեռքովը:

Ասիոյ մէկ անկիւնին մէջ ալ Աֆղանիստանի էմիրը մեռաւ. Աֆղանիստան կը գտնուի անգլիական Հնդկաստանի և Ռուսիոյ Ասիական սահմաններու միջև: Երկու մրցակից մեծ պետութիւններն ալ կաշխատին Աֆղանիստանը իրենց ազդեցութեան տակ պահել և շարունակ էնթրիկներ կը լարեն հոն. մեռնող էմիրը Անգլիոյ բարեկամ էր: Հիմա կրկին երկու պետութեանց գիւտնազէտները Աֆղանիստանի մայրաքաղաքին մէջ պիտի ջանան նոր էմիրը իրենց ազդեցութեան տակ առնել:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Թէհրանէ Պեթերպուրկ կը հեռագրեն որ պարսիկ ժողովուրդին գեղգեղութիւնը հեռագրատէ կը սաստիկանայ ներկայ շահին կառավարութեան դէմ:

Եհնը գահը բարձրանալու տուն շատ մը բարեփոխումներ խոստացեր է իբր թէ և մինչեւ օրս ատոնցմէ ոչ մին կատարուած է:

Ժողովուրդը աւելի զժողո՛հ է հարկերու ծանրութենէն և ազքատութենէն:

Մուղղափէրէտներն բոլորովին թողլ և տկար, անկարող է կառավարութեան զէկը ձեռք առնել. իսկ սատարողամբ հոգեւորականներու հետ ձեռք ձեռքի տուած ժողովուրդը կը ճնշեն եղեր:

Լրտեսութիւնը չափազանց կերպով զարգացեր է, արտասահմանի մէջ ապուած թերթերը իրենց աէրիւրուն չեն յանձնուէր իբր թէ, և կառավարութեան կողմէ կը գրաւուին: Ժողովուրդին վիճակը հետզհետէ ծանրա-

նալով մտալուտ ապստամբութիւն մը անխուսափելի կը համարուի:

Ինչպէս ըսինք, այս աղբւրը քուսական է և շատ ալ հաւատալ չէ կարելի:

Անգամ մըն ալ ասանկ լուր տարածուեցաւ, և Պրիւքսէլի պարսկական դեսպանը պաշտօնապէս հերքեց այդ Պարսկաստանի վերաբերեալ յուշիչ լուրերը:

Ռուս կառավարութիւնը մեծ փափար ունի Պարսկաստանն սակըն ու վրայ եղած տեսնալ, որովհետեւ խաղաղ միջոցներով չի կրնար իր ազդեցութիւնը զօրեղացնել Պարսկաստանի մէջ. Անգլիայի պէս մրցակից մը ունենալով, և շատ հաւանական է որ ինքն ալ մեծ ջանքեր կը թափէ Պարսկաստանի մէջ խռութիւններ առաջ բերելու, որպէս չի առիթ ունենայ զօրքով միջամտելու և իրեն պէտք եղած պարսկական նահանգները գրաւելու:

Յանկալի է որ Պարսիկ պետական մարդիկ ըմբռնեն իրենց հայրենիքին զխոն գալիք վտանգին մեծութիւնը և ջանան Պարսկաստանը ազատել այնպիսի քաղաքական փոթորիկներէ, որոնց հետեւանքը պիտի ըլլայ Ռուսիոյ կամ ուրիշի մը միջամտումը իրենց ներքին գործերու մէջ և Պարսկաստանի անկախութեան ոչնչացումը:

ՍԻՍԱԿԱՆ ԲԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Վառնայի երկսեռ վարժարաններու աշակերտաց մէջ միտքը յղացեր է իրենց չքաւոր ընկերներուն օգնելու համար ընկերութիւն մը հիմնել: Այդ ընկերութիւնը արգէն հիմնուած է, որու գործադիր վարչութեան երկու կարեւոր անդամուհիները գիմնցին հարձու մը մը յոյսաւ և կը դիմեն հայ հասարակութեան իրենց զօրավիգ հանդիսանալու այդ գեղեցիկ նպատակով գործին մէջ:

Կը շնորհատրենք այդ միտքը յղացող և գործնական հիմնութեան վրայ դնողները: Ասիկա շատ սիրուն երեւոյթ մըն է որ տեղի կունենայ Վառնայի դպրոցական կեանքին մէջ. դեռ աշակերտական նստարանին վրայ զգալ մերձաւորին ցաւերը և ճիւղեր: Թափել այդ ցաւերը դարձանելու համար, ամենամխիթարական երեւոյթն է մեր այն սերունդին կեանքին մէջ որ քանի մը տարիէն յետոյ, ինքը արգէն հասունցած հասարակական գործերու մէջ դեր պէտի կատարէ:

Գեռափթիթներու ընկերութեան վարչութիւնը շատ ուրջ կերպով զգալով թէ՛ իրենց հաճոյքներուն համար ծնողներէն ստացած գրամը եթէ ամբողջովին իսկ նուիրուի այդ ընկերութեան՝ զգալի և դրական օգուտ մը չի պիտի տայ, գիմում կընէ Վառնայի հասարակութեան այն մասին, որը դպրոցով կը հետարքրուի և կուզէ անոր յառաջգիմումը:

Կուզենք հաստատել թէ՛ գեռափթիթ օրանրէ բղիսած այդ հրաւերը՝ ձայն բառարոյ յանապատի չը պիտի մնայ, և Վառնայի հայ հասարակութեան զգայուն ու գիտակից մասը շուտով արձագանք պիտի տայ այդ հրաւերին:

Մեր հասարակութիւնը անտարբեր չը մնալով դէպի այդ հրաւերը՝ թէ հայ չքաւոր աշակերտներուն պիտի օգտակար հանդիսանայ, և թէ մասաղ սերունդին հիմովուրնէ պիտի քաջալերէ բարի գործելու մէջ:

Այսպիսի երեւոյթներուն հանդէպ հասակաւորներուն անտարբերութիւնը կրնայ առաջին վայրկեանին մեր մատաղ սերնդին մէջ մեռցնել մարդասիրական զգացումներու նորարոգքով ծիլերը և զանոնք ալ դարձնել նոյն քարասիրտները, ինչ որ մենք և անցեալ սերունդները կը ներկայացնենք:

էն.

ՕՐԻՈՐԴ ՍԹՕՆ

Ամերիկացի միսօնարուհին դեռ դանտուած չէ. դեռ աւազակներու ձեռք կը դեգրի, մինչև որ իր փրկանքի գումարը հանդանակուի Ամերիկայի մէջ եւ զրկուի:

Օրիորդին տեղը յայտնի չէ. ումանք կրտեն թուրքիոյ մէջ կը գրանուի, ոմանք ալ կը պնդեն թէ աւազակները Պուլկարիտ անցուցած են: Անխիտանութեան մասնուած թուրքիոյ մէջ ամերիկուհի մը առեւանգուեց է և խեղճ Պուլկարիոյ գլուխն ալ ցաւի մէջ ինկած է:

Առ այժմ Ամերիկան է որ դրամ կը պատրաստէ Սթօնը փրկելու համար, բայց այդ դրամը տալէն եւ միսօնարուհին ազատելն յետոյ անպատճառ թուրքիոյ օձիքէն պիտի բռնէ և Սուլթան շամիլին կողորդէն այդ գումարը ամբողջովին կամ կրկնապատիկը դուրս կորդէ:

Թուրքիա եւրոպական թերթերու մէջ կը կը տարածէ որ Սթօնը յափշտակողները պուլկար յեղափոխականներ են, նոյնիսկ այնքան առաջ կերթայ, որ կը յայտարարէ թէ Մ. Բ. Կօմիթէին նախկին նախագահ Սարաֆօֆ Սթօնը յափշտակող խումբին խլուխն է և փրկանքը անոր անունով պահանջուեր է, որ վերջը պիտի գործադրուի Մակիդոնիոյ մէջ ապստամբութիւն բարձրացնելու համար: Վերջապէս Սթօն միսօնարուհիին

հետ պատահածը յեղափոխական եւ վրպական կերպարանք մը կառն է: Անշուշտ արկածասէր եւ արտակարգ գիպուածները սիրող ամերիկուհիներ իմանայ թէ իր առեւանգումը այնքան մեծ յուզումներ յատալ բարա հին եւ նոր աշխարհներուն մէջ եւ երբ համազուր թէ իրեն համար փրկանք տրուած դրամը սովորական աւազակներու դրամը չը պիտի մոնայ, այլ սարուկ ժողովրդի մի ազատութեան գործին պիտի ծառայէ, չը պիտի բարկանայ զինք յափշտակողներուն դէմ:

Մակայն շատ կասկածելի է որ Միսս Սթօն յեղափոխականներէ յափշտակուած ըլլայ, թուրքիոյ մէջ առաջին անգամ չէ որ և բողոքներ կը յափշտակուին մեծ գումարներ կորզելու նպատակով:

ԶԵԿՈՅՅ

Վարժարանիս երկսեռ ուսանողները իենց անձին վրայ իսկ զգալով այն կորուստը, որուն միշտ կենթարկուին վարժարանական անհրաժեշտ պիտոյքներու եւ գործիքներու չզոյւթեան պատճառաւ, եւ տեսնելով այն զրկանքը որուն զոհ կերթան, սղքատ աշակերտներն ու աշակերտուհիները իրենց անհրաժեշտ գրքերն ու տետրակները նոյնիսկ հայթայթելու անկարող ըլլալով

Սեպտ. 23ին կազմեցին Սիւսկեան Սանուց Ընկերութիւն մը, իրենց հասոյթներուն չափով ելդ պէտքերը լրացնելու և իրենց աղքատ ընկերակիցներուն օգնելու համար:

Մանուցանելով ասիկայ Վառնայի հայ հասարակութեան, կը հրաւիրենք մեր դաստիարակութեան գործով հետաքրքրուող և մեր ու մեր ապագայ սերունդներուն աւելի կանոնաւոր ու ամբողջական կրթութիւն մը ստանալուն նախանձախնդիր բոլոր աղքայիները և մանաւանդ եւրիտասարդները, որոնք դեռ շատ հեռաւոր անյարայնով մը չեն բաժնուած մեր սիրելի դպրոցական հարկէն, որպէսզի փութան աջակցիլ իրենց անդամակցութեամբ կամ նուէրներով մեր այս ջանքերուն՝ որոնք ամենէն գործնական զարկը պիտի տան մեր դպրոցին դասաւանդութեանց կանոնաւոր ու գերազանցօրէն օգտաւէտ դառնալուն:

Սիւսկեան Սանուց Ընկ. Գործ. Վարչութեան կողմէ  
Ատենադպիր Ատենապետ  
Մ. Յովհաննիսեան Ա. Թովմասեան  
Վառնա 28 սեպտ.

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պէրլինէն «Ն.Ֆ. Բրէսսի» կը հաղորդեն թէ՛ Պլոսոյ Ռուս դեսպան Զինովիէֆ հրաման ստացած է Սուլթանին ստիպել Հայաստանի մէջ խաղաղութիւնը վերականգնել և հաստատօրէն Սուլթանէն պահանջել Հայաստանի մէջ շատապով այն բարենորոգումները մտցնել, որոնք շուտով իրեն պիտի ներկայացունին:

Մենք չենք հաւատար այս լուրին:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ռ Ի Ս Ի Ա

Բարձ. Գուռը ստակ կը փնտռէ. գիմած է Պանք Օթթօմանին և Տէօշ Պանքային կարեւոր կանխավճար մը ընեն, որուն մէկ մասովը պիտի վճարուի Լօրանտօի պահանջը:

— Փրանսական թերթերը Ռուսուսի Սուլա քաղաքէն կը հաղորդեն թէ՛ այնտեղ ձերբակալեր են թուրք սպայ մը, որ զրկուած է եղեր Հարաւային Ալճէրիոյ բնակիչները ապստամբութեան գրգռելու համար, եթէ Փրանսայի և Ռուրքիոյ միջեւ պատերազմ ծագի:

Սեպտ. 17ին Սէլանիք—Իսկիւր երկաթուղիի գծին կրատակօ կայարանին գիմացը թուրք զօրքերու և պուլկարի հրոսակաւոր մը միջեւ ընդհարում տեղի ունեցեր է:

— Ականատեսները կը պատմեն որ պուլկարներուն թիւրք ջը Եղած է, որոնք զէնքի գիմած էին իրենց ծնողներուն վրայ թուրքքերուն կողմէն եղած զազանութիւններու և իրենց ստացուածքը հրդեհուելուն պատճառով:

Կուրը պատահեր է գծին վրայ, թրէնը ստիպուեր է կանգնիլ, մինչեւ կուրին վերջանալը:

— Պոլսէն «Թան» կը հաղորդեն թէ՛ Միացեալ Նահանգներու Բարիզի դեսպանը Պոլիս եկած է. Սուլթանէն պիտի ընդունուի: Պուլկարիոյ Սամսքօֆ քաղաքէն եկած Ամերիկացի Միսսիօնները կրկին վերադարձեր է. Միսս Օթթօնը փախցնող աւազակները կը պահանջեն որ փրկանքը այդ միսսիօնները տանի:

Միացեալ Նահանգներու հիւպատոսարանը ինչ ընելիքը չի գիտեր: Թուրք կառավարութիւնը թէ և մասամբ մը զինքը պատասխանատու կընդունի, բայց տրամադիր չէ փրկանքը վճարիլ:

Միացեալ Նահանգներն այժմիսը չունին վճարելու, որովհետեւ գէշ օրինակ մը պիտի ըլլայ:

Ռ Ռ Ի Ս Ի Ա

Քանի մը օր առաջ Փինլանտիոյ ծերակայտին ներկայացուցաւ խնդիր մը Չարին ներկայացնելու համար, զոր ստորագրած են 475,000 Փինլանտացիներ և Փինլանտահիւսներ: Ստորագրողները խնդրէին որ ծերակայտը օրինական միջոցով այդ խնդիրը Չարին ներկայացնէ:

Ստորագրողները կը փաստեն զինուորական վերջին կարգադրութեան ապօրինութիւնը, իրենց գեղահոլութիւնը կը յայտնեն, նոյնպէս և այն որ իրենք չի պիտի ընդունին այն կարգադրութիւնները որոնք տեղի չեն ունեցած իրենց ազգին ընտրելիներու համաձայնութեամբ և Չարէն կը խնդրեն որ այդ կարգադրութիւնը փոխարինէ իրենց ժողովուրդին ամէն դասակարգերուն համաձայնութեամբը մշակուած մէկ նոր օրէնքով մը:

Չարին այդ կարգադրութիւնը ծերակայտը պիտի ընդունէր քուէարկութեամբ, սակայն լրագրիւնները կը հաղորդեն որ ծերակայտի անգամներէն շատերը մերժած են յօդու այդ կարգադրութեան քուէ տալ և անձամբ Չարին յայտնել են որ իրենց խիղճը չի թոյլատրեր կորստաբեր օրէնքի մը ընդունել տալուն մասնակից ըլլան:

Ռ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

«Էլէր» լրագրին խմբագրութիւնը թղթակից մը զրկեր է Քրիկէրին քով պատերազմի երկու տարին լրանալուն առթիւ: Քրիկէր հետեւեալը յայտարարած է թղթակցին.

Պատերազմին երկու տարի տեւելուն իրողութիւնը բաւ է զգացնելու համար թէ՛ ան զեռ պիտի տեսէ: Անարգար պատերազմի մենք կը պատասխանենք անսահման կորովով: Անգլիացիները պիտի ըլլան այս պատերազմին վերջ տուողները:

— Բրեթօրիայէն կը հեռագրեն թէ՛ Պօթլա զօրավարը յայտարարութիւն մը հրատարակեր է թէ՛ Անգլիացիներուն կողմէն զբաւուած կալուածները զնոյ պօլրները մահուամբ պիտի պատժուին:

— Եօհաննէսպուրի մէջ, իբր մասնիչ անգլիացիներու կողմէ հրացանի բռնուեր է թրանսվալի ընդհանուր դատախազ Պ. Պրքօմա:

Ս Մ Ե Ր Ի Ա Ա

Միացեալ Նահանգներու զանազան քաղաքներու մէջ ինքը ժողովուրդը իկսած է միջոցներ

ձեռք առնել անիշխանականութիւնը ոչնչացնելու համար: Շիկագօի մօտերը Օսթինի բնակիչները «հասարակապետութիւն» անունով զաղտնի ընկերութիւն մը հիմնած են, որուն նպատակն է «ճնշել անիշխանական քորոզութիւնը, պաշտպանել հասարակական հիմնարկութիւնները կեանքը և քաղաքացիներու սեփականութիւնները անիշխանական և անոնց գործունէութեանց դէմ»:

Այդ ընկերութիւնը որ կը յուսայ ամէն տեղ տարածուելու իր դործակալները պիտի ունենայ անիշխանականները հետեւելու և զանոնք հսկելու համար:

Նոյն տեսակ ընկերութիւն մըն ալ հիմնուեր է Քալիֆօրնիայի Սանտիէօի քաղաքին մէջ. հա՞րիւր յայտնի քաղաքացիներ որոշած են անիշխանականութիւնը ջախջախել:

Չիգակօի քաղաքային խորհուրդն ալ որոշած է ազգային ժողովէն պահանջել օրէնք մը քուէարկել որով պիտի արգիլուին անիշխանական քարոզները, ու չը հնուզանդուողները երկրէն տարագրուին:

Պ Ռ Ի Լ Կ Ա Ր Ի Ա

Եսա մը քաղաքներու մէջ միթիւնկներ տեղի ունեցեր են յօգուս մակեդոնական խնդրին:

— Հոկտեմբեր մէկէն նոր նամակագրօշմները սկսան գործածուիլ: Նամակագրօշմները իշխան ֆէրտինանտին պատկերով են:

— Ռուսմանիոյ և Պուլկարիոյ մէջ նոր ընդհարում մը տեղի ունեցեր է: Անցեալները Բախովիցայի սահմանագիծին Պուլկար զօրքերը կը ձերբակալեն չորս կասկածելի Ռուսմանացիներ, այն միջոցին երբ ատոնք կը չափեն եղեր Դանուբին խորութիւնը պուլկարական եզրին քովերը:

«Խորպիայի» նաւահանգստին հրամանատարը կը պահանջէ ձերբակալուածներու ազատ արձակումը, սակայն պուլկար իշխանութիւնները չեն համաձայնիր:

Ա Յ Ղ Ա Ն Ի Ս Ս Ա Ն

Աֆղանիստանի էմիրը մեռեր է և իրեն յաջորդեր է սրգին Հապիբ Ալլախան, որ Հնդկաստանի Անգլիական փոխարքային նամակ մը գրեր է թէ՛ իր եղբայրները և զօրքը զինքը էմիր ընդունած են և ինքն ալ իր հօր սկզբունքներովը պիտի կառավարէ երկիրը:

Նոր էմիրը կը յուսայ թէ երկու երկիրներուն բարեկամութիւնը աւելի եւս պիտի ամրապնդուին:

— Նոր էմիրին գահը բարձրանալուն օրը աֆղանները Ռուսական սահմանին քովերը թշնամական ցոյցեր ըրեր են:


Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Նոր Բերքարան (պատկերազարդ) Առաջին տարի (Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած) Դին 70 Անթ. Կը ծախուի վառնայ Մ. Գայրակճեանի քով:

### ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

—(II)—



Հայ Դեր. խումբը առաջնորդութեամբ Ա. ՊէնկեԱնի վաղը հինգշաբթի գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ:

ՐԱՐԻՉԻ ՀՆԱՎԱՃԱՌԸ

Բարոյալից թատերախաղ 4 արարուած չ:

ԵՐԳ ԵՒ ՊԱՐ

Խիստ ծիծաղաշարժ զաւելա մէկ արար:

ՎԵՍԵԼՈ Հայ. դեր. խումբը կը խօստանայ ամէն հինգշաբթի երեկոյ բարոյալից եւ սրտաշարժ տոմսեր ներկայացնել թատերասէր հասարակութեան փափաքին համեմատ. թատերասրահին փոքրութեան պատճառով օթեակներուն մէկ կողմը կիսասրահ մը աւելցուած է առաջին կարգի տոմսակի գնով:

Ա Ղ Ի

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրդաի զիւղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակազմ չէկ պէտով ու յօնքերով, 6 աթիսէն վեր ուր լինելն յայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը քմխիթաբեկ հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով:

Ա Ղ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին իշխան Պօրթիլիկաութեան առթիւ տպուած գործածուած նամակագրօշմներ 1—5—15—25 սանդղմ: Դիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ վառնա

Отговорникъ: Мурадъ-Ераносянъ Печ. Взаимность — Варна